

մը կայ՝ Պ. Օսկանեան՝ որ իւր հազուազիւտ յատկութիւններովն մեծ անուն ու համարում ստացած է Ամերիկայի մեջ։

Նիւ—Ենորդի մէկ լրագիրը՝ Հոոմ ճըրնըլ անուն՝ մեր այս ազգայնոյն վրայ սյս անգամ հետեւեալ տողերը հրատարակած է, որ մեծ պատիւ կընեն ընդհանուր ազգիս։

“Թէ քաղաքիս և թէ Վ. աշխնկթընի մէջ լրագիրս ընթերցողով ցաւով պիտի իմանան Օսմանեան զեսպան Պլաք պէ. յին Ամերիկա վերագառնալու դիտարութիւն չունենալը, որ այժմ Վ. Պոլիս կը գտնուի։”

“Պլաք պէ. յին վերագառնալուն վրայ կցաւիմք, որայց ուրախ եմք որ մեր երկրին մէջ անոր յաջորդելու արժանի սբանչելի անձ մը ներկայ կը գտնուի։ Այս անձը՝ Արևելեան զիտուններէն Պ. Օսկանեան է։”

“Թիւրք մ’է, բայց երկար ժամանակէ հետէ մեր երկրին մէջ բնակած, և մեր երկրին դորածութեանց քաջահմուտ է, Այս անձը՝ եթէ Ամերիկայի գեսպան որոշուի օգոստ. Սուլթանէն, աւելի ընդունելի կը լսայ քան թէ որիշ անձինք։”

“Պարտուպատշաճ յարգանօք կինդրենք Բ. Պունէն որ անմիջապէս այս անձին յանձնէ դեսպանութեան պաշտօնը յԱմերիկա։” Պ. Օսկանեան թէ նախագահին և թէ անոր պաշտօնէից ակողմանէ սրտի մոօք պիտի ընդունուի։”

Բ. Դուռն ալ արդէն տեղեակ ըլլալով Պ. Ռոկանեանի բարեմասնութեանց, կյուսամք թէ Ամերիկացոց փափաքանաց համաձայն պիտի որոշէ, եթէ Պլաք պէ. յ Ամերիկա վերագառնալու դիտարութիւն չունի սսուզիւ։”

(Արդէն նյոյն ազգասէր և քաջահմուտ ազգայնոյն գեսպան լինելը մեր ազգ. լրագիրները հաղորդեցին)։

Փունչ թ. 647 դեկտ. 3

Անշարժ որբ-պաշտոնիւն Հ.

Հ. Եղիսէ անուն կամոլիկ վարդապետ մ’անցեալ ուրբաթ օրը Սամաթիոյ կամոլիկաց եկեղեցին ըստ Հոռոմէական ծիսի պատարագ ընելով և երեխայ մը մկրտելով, եկեղեցին պղծուեր է, Արովիտե վարդապետը հակահասունեան է եղիս։”

Հիմա եկեղեցին զոց է իրբեւ պղծեալ. Սամաթիոյ հասունեան կղերն ու ժողովուրդը հոն չեն երթար և տան մը մէջ ժամերգութիւն և պատարագ կընեն եղիս։”

Այս տեսակ սրբազնութիւն մը մինչեւ այսօր լուսած ու տեսնուած չըլլալուն համար է որ անշարժակիրը կուտանկ։”

Երուսաղէմի մէջ ամեն օր Լատինք կերթան պապամերժ Յունաց և Հայոց պատարագած սեղաններուն վրայ պատարագ կընեն, և խղճերնուն չզեխի, իսկ Հասունեանը չընդունող կամոլիկ քահանայի մը պատարագած սեղանը պղծեալ կհամարուի։”

Բայց զարմանալու չէ։”

Մոլեսանդրութիւնն ու հակառակութիւնն այսպիսի արտառոց և հակասական տեսարաններ կընան ընծայել աշխարհի։”

Տեսնենք ի՞նչպէս պիտի նորէն սրբազործի պղծեալ եկեղեցին։”

Այս ալ քիչ հետաքրքրաշարժ չէ։”

Մասիս թ. 4052 դեկտ. 46

ՊԱՇՏՈՆԵԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ՅՈՒԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԳԻ:

Դեկտ. 9— Երժ. Հմայեակ Վարդապետն ընդունեցաւ ի Միարանութիւն Մայր Եթոռոյս Լշմիածնի։”

„ „— Պանձակայ Ատեփաննոս քահանայն Խղեանց զրկեցաւ ի քահանայութենէ վասն զինեմոլ և անդարձ վարուցն, և առաքեցաւ ի Վանս Չարեքայ յապաշխարութիւն։”

„ 16— Ի տեղի Յակովը Վարդապետի Երժ. Կարապետ Վարդապետ Տէր Գալստեանց կարգեցաւ Վանահայր Ա. Թռովմայի Վանուցն Եգուկեաց։”

„ „— Երժ. Մկրտիչ Վարդապետ Շահնազարեանց կարգեցաւ Վանահայր Կարմիր կոչեցեալ Ա. Ոտեփաննոսի Վանուցն։”